146. ԹԱՔՈՍՆ ՈՒ ՄԱՔՈՍԸ

Էրկու հնգյեր են ըլըմ, մընի անըմը Թաքոս, մնինը՝ Մաքոս։ Թաքոսը լավ ա ապրըմ, համա Մաքոսը ախքատ ա ապրըմ։ Մի օր Մաքոսը պտահըմ ա Թաքոսին, ասըմ ա. «Ա՛րա Թաքոս, ես քեզանից շուշտ եմ վեկենըմ, կործի քյնըմ, շատ եմ աշխատըմ։ Քեզ էլ մի լուծ եզը ունես, ինձ էլ մի լուծ եզը ունեմ, քու քյուլփաթը իմի չափ. էդ ընչից ա, վըեր տու լավ ես ապրըմ, ես՝ չէ։

Թաքոսը ասըմ ա. «էտ նրանից ա, վեր տու միշտ քու կնգյա խոսկին անգաճ ես տնըմ, ես՝ չէ»։

Ըտիան եդը Մաքոսն իրան կնգյա խոսկին անգաճ չի տնըմ։ Մի օր էլ կտերը քյիրիլիս մոտանըմ ա, մի փտած փարդու վրա կաղնըմ ա։

Կնիկը ասըմ ա. «Ա՛ մարթ, դենը կաղնի, վեր ես ընգյնըմ»։

Ասըմ ա. «Քու կործը չի»։

Կնիկը շատ ա ասըմ, սա անգաճ չի տնըմ։ Կնիկը բրախըմ ա, կյալի տուն։ Մհել մի ծեն ա մանըմ։ Տուս ա կյալի տենըմ ա՝ փարդին կոտրել ա, մարթը վեր ա ընգյել։

Քյնըմ են սնդի պիրըմ, վըետը կապըմ։ Հնգյերը կյալիս ա, ասըմ ա. «էտ ի՞նչ ա ըլել»։

Ասըմ ա. «Ինչ լել ա, լել չի՝ քու մեղքովը ըլավ, տու ես մեղավըեր»։ Ասըմ ա. «Խի՞»։

Ասըմ ա. «Տու ասեցիր՝ կնգյատ խոսքին անդաճ մի տնիլ»։

Նա էլ ասըմ ա. «Ա՛ քու տունը չի քանդվի, կնգյանը կլսեն, համ ա հղարեցը մհետ»։